# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ
համայնք, գ. Սարչապետ, Հեռ. (077)867459 ,
sarchapet.lori@mta.gov.am

N 72-19
*22 փետրվար 2019թ.*

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ**

Ձեզ եմ ներկայացնում Սարչապետ համայնքի ավագանու 2019 թվականի փետրվարի 22-ի թիվ 06-09-Ա որոշումները: Կից ներկայացնում եմ Սարչապետ համայնքի 2018 թվականի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման հաշվետվության հղումը՝ http://192.168.1.2/upload/DocFlow/4CDPReports/Fr1922215003321746_1.pdf

Առդիր՝ 4 էջ:

**Համայնքի ղեկավար՝** **Բորիս Բարոյան**

*Կատ.* '

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 06-Ա

## ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝

***ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.***

1. Հաստատել Սարչապետ համայնքի ավագանու 2019 թվականի փետրվարի 22-ի թիվ 03 հերթական նիստի հետևյալ օրակարգը ՝

1) Սարչապետ համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման տարեկան և 2018 թվականին համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման հաշվետվությունների մասին : (Զեկ. Ս.Բարսեղյան)

2) Գոգավան բնակավայրում գտնվող հողամասերի նպատակայանին նշանակությունը փոփոխելու և Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու մասին (Զեկ. Վ.Հազոյան)

3) Օրինական աղբավայրի շահագործման վերաբերյալ (Զեկ. Ա.Մարտիրոսյան)

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ

ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ

ՄԽՈՅԱՆ ՔԱՎԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 07-Ա

## ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով և 36-րդ հոդվածի գ) կետով՝

***ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.***

1. Հաստատել Սարչապետ համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն N 1 հավելվածի :

2. Հաստատել 2018 թվականի Սարչապետ համայնքի հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն N 2 հավելվածի:

3.Աշխատակազմի քարտուղարին՝համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանու հաստատելուց հետո հնգօրյա ժամկետում հրապարակել azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ

ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ

ԱՌՆՅԱՆ ՉԱՎԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՌՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 08-Ա

## ԳՈԳԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԱՆԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 11.08.2005թ. թիվ 1484-Ն որոշումը, 25.12.2018թ. միջգերատեսչական հանձնաժողովի թիվ 159 դրական եզրակացությունը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

*ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.*

1.Փոփոխել Սարչապետ համայնքի վարչական տարածքում, Գոգավան բնակավայրում գտնվող թվով 5 (հինգ) միավոր հողամասերի նպատակային նշանակությունը՝

1) 06-067-0202-0001 ծածկագրից 0.22253 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, արոտավայր գործառնական նշանակության հողամասը որպես հատուկ նշանակության հողամաս,

2) 06-067-0202-0001 ծածկագրից 0.08708 հա մակերեսով գյուղատնտեսական արոտավայրը որպես հատուկ նշանակության հողամաս,

3) 06-067-0425-0001 ծածկագրից 0.54197 հա մակերեսով գյուղատնտեսական արոտավայրը որպես հատուկ նշանակության հողամաս,

4) 06-067-0101-0008 ծածկագրից 0.01497 հա մակերեսով բնակավայրերի այլ հողը, որպես հատուկ նշանակության հողամաս,

5) 06-067-0102-0002 ծածկագրից 0.01079 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման նշանակության հողամասը, որպես հատուկ նշանակության հողամաս:

2. Տալ համաձայնություն 06-067-0202-0001 ծածկագրից 0.22253 հա մակերեսով, 06-067-0202-0001 ծածկագրից 0.08708 հա մակերեսով, 06-067-0425-0001 ծածկագրից 0.54197 հա մակերեսով,06-067-0101-0008 ծածկագրից 0.01497 հա մակերեսով, 06-067-0102-0002 ծածկագրից 0.01079 հա մակերեսով հողմասերը Հայաստանի Հանրապետությանը նվիրատվությամբ սեփականության իրավունքով հանձնելու համար:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ

ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ

ՔԱՓԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ

ՄԽԻՈՅԱՆ ՋԱՎԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թվականի N 09-Ա

## ՕՐԻՆԱԿԱՆ ԱՂԲԱՎԱՅՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ և 42-րդ կետերով՝

*Սարչապետ համայնքի ավագանին որոշում է.*

1. Տալ համաձայնություն Սարչապետ համայնքի բյուջեից 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ փոխանցել Տաշիրի համայնքապետարանին՝Տաշիրի համայնքային սեփականություն հանդիսացող օրինական աղբավայրը շահագործելու համար:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԴԱԼՅԱՆ ԲԱՐՍԵՂ

ԳԻՆՈՅԱՆ ՄԿՐՏԻՉ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԱՐԳԱՐ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌԱՖԻԿ

ՄԽՈՅԱՆ ԶԱՎԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ